Արձանագրություն N 18/2-2

"ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-18/2" ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26 փետրվարի 2018թ. Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)	Ս. Թաթիկյան,
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Բ. Գրիգորյան, Ա. Վարդանյան,
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Պետրոսյան, Գ. Ամատունի,
Հանձնաժողովի քարտուղար (ՄՀՄ)՝	Ա. Բաղրամյան

1. ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ - 18/2 ծածկագրով մրցույթի հայտերի բացումը, օրը և ժամը
(Ս. Թաթիկյան)

1.1 ՔԵՆԴԼ – ԳՀԱՊՁԲ - 18/2 ծածկագրով մրցույթի հայտերը բացվել են www.armeps.am էլեկտրոնային մրցույթային համակարգով 2018թ. Փետրվարի 20-ին, ժամը 14:00-ին:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները

Չափաբաժին	Մասնակցի անվանումը	հասցե
1,4,7,9-12,14,15	«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ	ք. Երևան, Լենինգրադյան 31/7
1,2,4,7-15	«Մեդիսար» ՍՊԸ	ք. Երևան, Գետառի 4/9

2. Հայտերը էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ
(Ս. Թաթիկյան)

Մրցույթին ներկայացվել են 2 հայտ, որոնք 2-ն էլ ARMEPS համակարգը պիտանի է ճանաչել:

Սակայն «Մեդիսար» ՍՊԸ կազմակերպության հայտին կցված հավելվածները ARMEPS համակարգից չեն բեռնվում:

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ մասնակցի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում. **«Մեդիսար» ՍՊԸ-ի հայտը մերժել**. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ
(Ս. Թաթիկյան)

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված գների վերաբերյալ
(Ս. Թաթիկյան)

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված 15 չափաբաժիններից մասնակցության հայտ է ներկայացրել 9 չափաբաժինների համար՝ 1,4,7,9-12,14,15: Գնահատման ընթացքում տեխնիկական/ծրագրային սխալի հետևանքով 1,9-12,14,15 չափաբաժինների համար ARMEPS-ը անցողիկ գին սահմանեց միևնույն՝ 158833 դրամը. մինչդեռ տվյալ մասնակիցը իր գնային առաջարկում (հավելված 5) ներկայացրել է համապատասխանաբար 160000; 14000; 25000; 200000; 500000 և 300000: Միաժամանակ, ՔԵՆԴԼ ՍՀԻ հրապարակված գնումների պլանում այդ ապրանքների համար նախահաշվային գները էականորեն տարբերվում են, անհամապատասխանությունները մեծ չափերի են:

4-րդ չափաբաժնի պարագայում մեր կողմից ՄՀ-ն պատրաստելիս անզգուշաբար գնային առաջարկը կրկնակի է մուտքագրվել՝ 2 տողով. Մասնակիցն էլ նույն գումարը լրացրել է 2 տողում, արդյունքում ծրագիրը գումարել է այդ տողերի գումարները: Ստացված գինը մեծապես գերազանցում է ապրանքի իրական արժեքը, ինչը որ արտացոլված է մեր գնումների հաստատված պլանում:

Հայտերի բացումից հետո, 20.02.2018թ.-ին ARMEPS համակարգով, ոչ ավտոմատ ծանուցում ենք ուղարկել «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին, նկարագրելով ստեղծված բարդությունները և առաջարկել բանակցել գների իջեցման շուրջ: Սահմանված ժամկետում Գների կարգավորման շուրջ բանակցություններ չեն վարվել:

5. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների և պատասխանների մասին

(Ս. Թաթիկյան)

Հայտերի վերաբերյալ մասնակիցների կողմից հարցումներ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

(Ս. Թաթիկյան)

Հիմք ընդունելով ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատման արդյունքներում առաջացած անհամապատասխանությունները հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած գների և Պատվիրատու՝ ՔԵՆԴԼ ՍՀԻ գնումների պլանով հաստատված նախահաշվային գների միջև ինչպես նաև գների կարգավորման շուրջ բանակցությունների բացակայությունը՝

ՔԵՆԴԼ – ԳՀԱՊՁԲ - 18/2 ընթացակարգի լուծարել, հայտարարել չկայացած՝ գնումների մասին ՀՀ օրենքի հ. 37-ի 1-ին մասի 1) կետի հիմքով, քանի որ AEMEPS համակարգը անցողիկ համարվող գները շտկելու հնարավորություն չի տալիս:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Թաթիկյան

Անդամներ՝ _____ Բ. Գրիգորյան

_____ Ա. Վարդանյան

_____ Գ. Ամատունի

_____ Ա. Պետրոսյան

Քարտուղար՝ _____ Ա. Բաղրամյան